

Գլխավոր տեղեկություն

Համար	10-Պ5-43
Տիպ	Կարգ
Ակտի տիպ	Base act (21.08.1996-16.04.2016)
Կարգավիճակ	Չի գործում
Սկզբնաղբյուր	
Ընդունող մարմին	Էկոնոմիկայի նախարարություն
Ընդունման ամսաթիվ	05.08.1996
Ստորագրման ամսաթիվ	05.08.1996
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	21.08.1996
Ուժը կորցնելու ամսաթիվ	16.04.2016

Հաստատված է
ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից
29.07.1996 թ.
17-5/50

Հաստատված է
ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից
05.08.1996 թ.
10-Պ5-43

Կ Ա Ր Գ

**Ձեռնարկությունների եւ կազմակերպությունների ղեկսորդական ղարձերի
ՀԱՆՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՂԵԿՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ
ԱՆՀՈՒՍԱԼԻ ՃԱՆԱԶՄԱՆ, ԴՈՒՐՍ ԳՐՄԱՆ ԵՎ ՀԱԾՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱԾՎԱՌՄԱՆ ՄԵՋ ԱՐՏԱՑՈՒՄԱՆ**

Սույն կարգը սահմանվում է ի կատարումն ՀՀ կառավարության 1996 թ. մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման և հաշվետվության մասին կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 147 որոշմամբ հաստատված կանոնադրության 61-րդ և 67-րդ կետերի և գործողության մեջ է դրվում ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցելու պահից:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկությունների և կազմակերպությունների ժամկետանց դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի ձևավորման, ձեռնարկությունների կազմակերպությունների և բյուջետային հիմնարկների պարտքերի անհուսալի ճանաչման և դրանց դուրս գրման կարգը:

1.2. Դեբիտորական պարտքը՝ ձեռնարկությանը (կազմակերպությանը, հիմնարկին) իրավաբանական կամ ոչ իրավաբանական անձանց կողմից (դեբիտորներից), նրանց հետ տնտեսական փոխհարաբերությունների արդյունքում առաջացած, վճարման ենթակա պարտքի գումարն է:

1.3. Պարտքը համարվում է ժամկետանց, եթե այն պայմանագրով նշված ժամկետում չի մարվել և կողմերի համաձայնությամբ, մինչև մարման ժամկետի լրանալը, պայմանագրային կարգով չի երկարաձգվել:

Այն դեպքում, երբ կողմերը պայմանագրային կարգով չեն սահմանել պարտքի մարման ժամկետը, պարտքի մարման ժամկետ է համարվում գործառնության (գործարքի, փաստի) կատարման պահին հաջորդող 60-րդ օրը:

1.4. Սույն կարգում սահմանված ժամկետները առնչություն չունեն հայցային վաղեմության ժամկետների հետ:

2. ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԿԵՏԱՆՑ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

2.1. Պարտքերի հնարավոր կորուստների պահուստ կարող է ձևավորվել այն դեբիտորական պարտքերի համար, որոնք ժամկետանց են դարձել 1996 թ. հունվարի 1-ից հետո: Ընդ որում, պահուստը ձևավորվում է ձեռնարկությունների և կազմակերպությունների կողմից այլ ձեռնարկություններին, հիմնարկներին, քաղաքացիներին առաքված արտադրանքի (ապրանքների), կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների դիմաց ժամկետանց դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների համար, բացի այն պարտքերից, որոնց իրացման շրջանառությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշվում է վճարման պահի դրությամբ:

2.2. Դեբիտորական պարտքերը, ելնելով ժամկետանց օրերի թվից, դասակարգվում են 4 դասի՝ ոչ ստանդարտ, կասկածելի, վտանգավոր, անհուսալի: Ոչ ստանդարտ, կասկածելի և վտանգավոր դեբիտորական պարտքերին համապատասխանում են պահուստին մասհանման հետևյալ տոկոսադրույքները:

ՊԱՐՏՔԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

ՊԱՐՏՔԻ ԴԱՍԸ	ՊԱՀՈՒՍՏԻՆ ՄԱՍՀԱՆՄԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ
1. Ոչ ստանդարտ Պարտքը ժամկետանց դառնալու օրվանից մինչև 90-րդ օրը ներառյալ	մինչև 20 %
2. Կասկածելի Պարտքը ժամկետանց դառնալու 91-րդ օրվանից մինչև 270-րդ օրը ներառյալ	մինչև 50 %
3. Վտանգավոր Պարտքը ժամկետանց դառնալու 271-րդ օրվանից մինչև 365-րդ օրը ներառյալ	մինչև 100 %
4. Անհուսալի Պարտքը ժամկետանց դառնալու 366-րդ օրը	

2.3. Դեբիտորական պարտքը ժամկետանց դառնալու պահից մինչև 90-րդ օրը լրանալը համարվում է ոչ ստանդարտ: Ոչ ստանդարտ պարտքերի համար ձեռնարկությունը, կազմակերպությունը կարող է պահուստ ուղղել պարտքի մինչև 20 տոկոսի չափով գումար:

2.4. Դեբիտորական պարտքը ժամկետանց դառնալու 91-րդ օրվանից մինչև 270-րդ օրը լրանալը համարվում է կասկածելի: Կասկածելի դեբիտորական պարտքի համար ձեռնարկությունը, կազմակերպությունը կարող է պահուստ ուղղել պարտքի մինչև 50 տոկոսի չափով գումար:

2.5. Դեբիտորական պարտքը ժամկետանց դառնալու 271-րդ օրվանից մինչև 365-րդ օրը լրանալը համարվում է վտանգավոր: Վտանգավոր դեբիտորական պարտքի համար ձեռնարկությունը, կազմակերպությունը կարող է պահուստ ուղղել մինչև 100 տոկոսի չափով գումար:

2.6. Դեբիտորական պարտքը ժամկետանց դառնալու 366-րդ օրը համարվում է անհուսալի: Դեբիտորական պարտքը համարվում է անհուսալի նաև այն դեպքում (անկախ ժամկետանց օրերի թվից), երբ պարտապանը օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել է սնանկ կամ օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացվել է պարտքի մարման անհնարինությունը:

2.7. Պահուստ ուղղվող մասհանումները, անկախ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքից (շահույթ կամ վնաս), կատարվում են սույն կարգի 2.2. կետում սահմանված ժամկետանց պարտքի դասին համապատասխան տոկոսադրույքների սահմաններում:

2.8. Պահուստի միջոցները օգտագործվում են սույն կարգի 2.6. կետի համաձայն անհուսալի համարվող պարտքերի դուրս գրման համար:

2.9. Պահուստի ընդհանուր մեծությունը ճշգրտվում է յուրաքանչյուր պարտքի մարմանը գույքընթաց, մինչև նույն եռամսյակի վերջին օրը, տվյալ պարտքի պահուստավորված գումարի չափով պակասեցնելով պահուստը և ավելացնելով ֆինանսական արդյունքները:

3. ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՆՀՈՒՍԱԼԻ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ԴՈՒՐՍ ԳՐՈՒՄԸ

3.1. Սույն կարգի 2.6. կետի համաձայն անհուսալի դարձած (ճանաչված) դեբիտորական պարտքերը ձեռնարկությունների, կազմակերպությունների և բյուջետային հիմնարկների

կողմից ենթակա են հաշվեկշռից դուրս գրման՝ անհուսալի դառնալու (ճանաչվելու) օրվանից մինչև նույն եռամսյակի վերջին օրը:

3.2. Ձեռնարկություններն ու կազմակերպությունները, որոնք տվյալ դեբիտորական պարտքի համար ձևավորվել են պարտքերի հնարավոր կորուստների պահուստ, անհուսալի դեբիտորական պարտքը դուրս են գրում պահուստի հաշվին:

Եթե տվյալ անհուսալի դեբիտորական պարտքի համար ձևավորված պահուստը չի բավարարում այդ պարտքի դուրս գրման համար, ապա անհուսալի պարտքի պահուստի հաշվին չմարված մասը դուրս է գրվում ձեռնարկության, կազմակերպության ֆինանսական արդյունքներով:

Այն ձեռնարկություններն ու կազմակերպությունները, որոնք դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ չեն ձևավորում, անհուսալի պարտքերը դուրս են գրում ֆինանսական արդյունքների հաշվին: Ընդ որում, երբ արտադրանքի (ապրանքների), աշխատանքների, ծառայությունների իրացումը որոշվում է վճարման պահով և որոնք հաշվապահական հաշվառման մեջ արտացոլվում են 45 «Բեռնված ապրանքներ» հաշվապահական հաշվում, այդ գումարները դուրս են գրվում հաշվեկշռային արժեքով՝ փաստացի ինքնարժեքով:

3.3. Բյուջետային հիմնարկները անհուսալի դեբիտորական պարտքերը դուրս են գրում ֆինանսավորման (ֆոնդերի) հաշվին:

3.4. Մինչև 1996 թ. հունվարի 1-ը ժամկետանց դարձած դեբիտորական պարտքերը 1996 թ. ընթացքում, անհուսալի դառնալուն զուգընթաց, սույն կարգի 3.1. կետի պահանջին համապատասխան դուրս են գրվում մինչև 1996 թ. դեկտեմբերի 31-ը:

3.5. Մինչև 1996 թ. հունվարի 1-ը 45 «Բեռնված ապրանքներ» հաշվում հաշվառված առաքված արտադրանքի, ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների գումարները սույն կարգը գործողության մեջ դրվելուց հետո ենթակա են մինչև 1996 թ. դեկտեմբերի 31-ը դուրս գրման 3.1. կետի պահանջներին համապատասխան: Ընդ որում, այդ պարտքերը դուրս են գրվում իրենց հաշվեկշռային արժեքով՝ ինքնարժեքով:

3.6. Պարտապանի անվճարունակության հետևանքով հաշվեկշռից անհուսալի պարտքի դուրս գրումը չի համարվում պարտքի անվավեր ճանաչում: Դուրս գրման պահից սկսած անհուսալի պարտքը առնվազն 5 տարի հաշվառվում է կազմակերպության արտահաշվեկշռում, նպատակ ունենալով այն հետագայում գանձել պարտապանից: Ընդ որում, արտահաշվեկշռում առանձնացված է հաշվառվում 45 «Բեռնված ապրանքներ» հաշվապահական հաշվից ինքնարժեքով դուրս գրված պարտքերը:

3.7. Այն դեպքում, երբ հետագա 5 տարիների ընթացքում պարտապանից չի ստացվում դուրս գրված անհուսալի պարտքի գումարը, պարտատերը այն կարող է դուրս գրել արտահաշվեկշռային հաշվառումից:

3.8. Դուրս գրված դեբիտորական պարտքը մարվելու դեպքում, մարված գումարի չափով ավելացվում են հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքները, իսկ բյուջետային հիմնարկներում՝ ֆինանսավորումը (ֆոնդերը):

3.9. 45 «Բեռնված ապրանքներ» հաշվապահական հաշվից դուրս գրված պարտքերի վճարման դեպքում, մարված ամբողջ գումարը ձևակերպվում է որպես իրացումից հասույթ:

4. ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵԿՇՐԻՑ ԱՆՀՈՒՍԱԼԻ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ԴՈՒՐՍ ԳՐՄԱՆ ԱՐՏԱՑՈՒՄԸ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԵՋ

4.1. Ձեռնարկություններում ու կազմակերպություններում ժամկետանց դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի ձևավորումը և հաշվեկշռից անհուսալի դեբիտորական պարտքերի դուրս գրումը հաշվապահական հաշվառման մեջ արտացոլվում է հետևյալ կերպ.

ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ԴԵԲԵՏ	ԿՐԵԴԻՏ
1. Կատարվել է մասհանում դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստին	80	82
2. Ճշգրտվում է պահուստը պարտքի մարմանը զուգընթաց՝ պահուստավորված գումարի չափով	82	80
3. Դուրս է գրվում անհուսալի դեբիտորական պարտքը պահուստի հաշվին՝	82	62
ա. գնորդի և պատվիրատուի պարտքը	82	62
բ. դատարանի կողմից անհուսալի ճանաչված	82	71
գ. աշխատողի պարտքը առհաշիվ գումարի գծով	82	71
դ. այլ դեբիտորական պարտքը	82	76
4. Դուրս է գրվում անհուսալի դեբիտորական պարտքը՝ պահուստի հաշվին չմարված մասով	80	45, 62, 63, 71, 76
5. Արտահաշվեկշռում հաշվառվում է արդեն դուրս գրված դեբիտորական պարտքը	007	-
	50,51,52 և	80

6. Վճարվել է նախկինում դուրս գրված դեբիտորական պարտքը	այլն	
7. Վճարվել է նախկինում ինքնարժեքով դուրս գրված պարտքը	50,51,52	46
8. Արտահաշվեկշռից դուրս է գրվում պարտքը	-	007

4.2. Բյուջետային հիմնարկներում անհուսալի դեբիտորական պարտքերի դուրս գրումը հաշվապահական հաշվառման մեջ արտացոլվում է հետևյալ կերպ.

ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ԴԵԲԵՏ	ԿՐԵԴԻՏ
1. Դուրս է գրվում անհուսալի դեբիտորական պարտքը	14,23,24 (համապատասխան ենթահաշիվներով)	15,16,17,18,19 (համապատասխան ենթահաշիվներով)
2. Արտահաշվեկշռում հաշվառվում է արդեն դուրս գրված դեբիտորական պարտքը	05	-
3. Վճարվել է նախկինում դուրս գրված դեբիտորական պարտքը	09,10,11,12,13 (համապատասխան ենթահաշիվներով)	14,23,24 (համապատասխան ենթահաշիվներով)
4. Արտահաշվեկշռից դուրս է գրվում պարտքը	-	05

Օրինակ.

Ձեռնարկության 1996 թ. հուլիսի 1-ի հաշվեկշռում առկա են հետևյալ դեբիտորական պարտքերը.

1. 62 «Հաշվարկներ գնորդների և պատվիրատուների հետ» հաշվում`

1996 թ. մարտի 10-ին գնորդին առաքված պատրաստի արտադրանքի դիմաց ձեռնարկությունը պարտք են 560000 դրամ, որի վճարման ժամկետը ապրիլի 10-ն էր:

2. 63 «Հաշվարկներ գանգատների գծով» հաշվում` 1996 թ. փետրվարի 8-ին ժամկետանց դարձած դեբիտորական պարտքերի վերաբերյալ բողոքարկված գումարը կազմել է 340000 դրամ:

3. 62 «Հաշվարկներ գնորդների և պատվիրատուների հետ» հաշվում

1996 թ. հունվարին մատուցվել է ծառայություն, որի դիմաց պատվիրատուն պարտավորվել է վճարել 1996 թ. փետրվարին` 50000 դրամ գումարի չափով:

4. 1994 թ. հոկտեմբերին առաքված պատրաստի արտադրանքի դիմաց գնորդը պարտք է 32000 դրամ, որի վճարման ժամկետը պայմանագրով նախատեսված չի եղել:

Սույն պարտքը հաշվեկշռում 45 «Բեռնված ապրանքներ» հաշվապահական հաշվում արտացոլված է ինքնարժեքով` 10000 դրամ գումարով:

1996 թ. 9-ամսյա հաշվետվությունը ամփոփելու ժամանակ ձեռնարկությունը կարող է մասհանումներ կատարել պարտքերի հնարավոր կորուստների պահուստին և դուրս գրել արդեն անհուսալի ճանաչված դեբիտորական պարտքերը:

Օրինակում բերված 1-ին պարտքը 1996 թ. սեպտեմբերի 30-ին ժամկետանց կլինի 170 օր, այսինքն կդասվի կասկածելի պարտքերի դասին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պարտապանը չի կարողանում պարտքը մարել, նպատակահարմար է պահուստավորել տվյալ պարտքի դասի առավելագույն տոկոսադրույքին համապատասխան գումար, այսինքն` 50 տոկոսի չափով: $(560000 \times 50 : 100) = 280000$ դրամ չափով տրվում է հետևյալ հաշվապահական ձևակերպումը.

Դեբետ 80 «Շահույթ և վնաս»

Կրեդիտ 82 «Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ»

2-րդ պարտքը 1996 թ. սեպտեմբերի 30-ին ժամկետանց կլինի 235 օր: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ 1996 թ. սեպտեմբերի 2-ին տվյալ պարտապանը դատարանի կողմից անվճարունակ է ճանաչվել, այսինքն պարտքը անհուսալի է դարձել մինչև 360 օրը լրանալը, պարտքը պետք է դուրս գրվի հաշվեկշռից:

340000 դրամ գումարի չափով տրվում է հետևյալ հաշվապահական ձևակերպումը.

Դեբետ 80 «Շահույթ և վնաս»

Կրեդիտ 63 «Հաշվարկներ գանգատների գծով»

Միաժամանակ դեբետագրվում են 007 «Դուրս գրված անհուսալի դեբիտորական պարտքեր» արտահաշվեկշռային հաշիվը:

3-րդ պարտքը 1996 թ. սեպտեմբերի 30-ին կդասվի կասկածելի պարտքերի դասին:

Ձեռնարկությունը որոշում է պահուստային մասհանում չկատարել:

4-րդ պարտքը հաշվեկշռում արտացոլված է 45 «Բեռնված ապրանքներ» հաշվապահական հաշվում: Ուստի պարտքը, որպես անհուսալի պարտք, դուրս գրելուց տրվում է հետևյալ ձևակերպումը, 10000 դրամ գումարի չափով:

Դեբետ 80 «Շահույթ և վնաս»

Կրեդիտ 45 «Բեռնված ապրանքներ»

Միաժամանակ դեբետագրվում է 007 «Դուրս գրված անհուսալի դեբիտորական պարտքեր»

արտահաշվեկշռային հաշիվը՝ 32000 դրամ գումարի չափով, առանձնացված կարգով:

Այսպիսով, 1996 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ հաշվեկշռում կմնան 1-ին (560000 դրամ) և 3-րդ (50000 դրամ) դեբիտորական պարտքերը:

Միաժամանակ, այդ նույն պարտքերի համար ձևավորվել է հնարավոր կորուստների պահուստ 280000 դրամ գումարի չափով:

Դիցուկ, 1996 թ. նոյեմբերին վճարվել են.

ա) գնորդի 560000 դրամ պարտքը

Հաշվապահական հաշվառման մեջ տրվում է հետևյալ ձևակերպումը.

Դեբետ 51 «Հաշվարկային հաշիվ»

Կրեդիտ 46 «Արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների իրացում»:

Միաժամանակ ճշգրտվում է 82 «Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ» հաշվապահական հաշվի մնացորդը՝

Դեբետ 82 «Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ»

Կրեդիտ 80 «Շահույթ և վնաս»

թղթակցությամբ, արդեն կատարված մասհանման գումարի (280000 դրամ) չափով:

բ) 1996 թ. սեպտեմբերին հաշվեկշռից դուրս գրված 32000 դրամ պատվիրատուի պարտքը

Այս պարտքը հաշվառված էր արտահաշվեկշռային 007 «Դուրս գրված անհուսալի դեբիտորական պարտքեր» հաշվում: Սույն գործառնության համար, 32000 դրամ գումարի չափով տրվում է հետևյալ հաշվապահական ձևակերպումը.

Դեբետ 51 «Հաշվարկային հաշիվ»

Կրեդիտ 48 Միաժամանակ կրեդիտագրվում է 007 «Դուրս գրված անհուսալի դեբիտորական պարտքեր» արտահաշվեկշռային հաշիվը՝ նույն գումարով:

Տարեկան հաշվետվությունը ամփոփելիս.

1. Մատուցված ծառայության դիմաց 50000 դրամ պարտքը դեկտեմբերի 31-ի դրությամբ դասվում է վտանգավոր պարտքերի դասին, որի համար նպատակահարմար է մասհանել պահուստաֆոնդին գումար, դիցուկ 90 տոկոս $(50000 \times 90 : 100) = 45000$, ձևակերպելով.

Դեբետ 80 «Շահույթ և վնաս»

Կրեդիտ 82 «Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ»

Գրանցված է

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
կողմից

21.08.1996 թ.

պետական գրանցման թիվ 20960046